Արձանագրություն N 7
«ՏԿՆ-ԲԸԱՇՁԲ-2017/1Շ» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «20» հունիսի 2017թ.
ժամը 16:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Գասպարյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Օ.Խաչատրյանը և Ա. Պապյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Ի. Բաց ընթացակարգի հայտերի բացման նիստը շարունակելու մասին
(Կ. Գասպարյան)

1. Ընդունել ի գիտություն, որ հրավերով սահմանված՝ հայտերի կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին.

ա) համապատասխանում է՝ «Մոստովիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը,

բ) չի համապատասխանում՝ «Գազկոմշին» ՍՊԸ- կողմից ներկայացված հայտը, հետևյալ հիմնավորմամբ.

Կազմակերպությունը, որպես նախնկինում կատարված համանման (նմանատիպ) պայմանագրեր ներկայացրել է Լճաշեն, Չկալովկա և Նորաշեն գյուղերի ջրամատակարարման համակարգերի բարելավման աշխատանքները, "Հայաստանի հանրային հեռուստաընկերություն" ՓԲԸ Գլխավոր մասնաշենքի արտաքին սանդուղքների կապիտալ վերակառուցման, վերանորոգման աշխատանքների և "Երևան" ստուդիա մասնաշենքի վթարային հատվածի քանդման, կից երեքհարկանի աստիճանավանդակի կառուցման, չվերանորոգված հատվածի ընթացիկ վերանորոգման, "Ճաշարան" մասնաշենքի մի հատվածի քանդման աշխատանքները: Վերոնշյալ պայմանագրերը չեն համարվում նմանատիպ, քանի որ չեն իրականացվել հրավերով սահմանված լիցենզիայի շրջանակներում:

գ) չի համապատասխանում՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ- կողմից ներկայացված հայտը, հետևյալ հիմնավորմամբ.

Կազմակերպությունը, որպես նախնկինում կատարված համանման (նմանատիպ) պայմանագիր ներկայացրել է Մուսա լեռ հուշահամալիրի վերանորոգման և բարեկարգման աշխատանքները: Վերոնշյալ պայմանագրերը չեն համարվում նմանատիպ, քանի որ չեն իրականացվել հրավերով սահմանված լիցենզիայի շրջանակներում:

դ) չեն համապատասխանում՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի, «Բերմա» ՓԲԸ-ի, «ՄՈՆՏԱԺՏՐԱՆՍՍՇԻՆ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը, քանի որ չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա) «Մոստովիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել «Բավարար», քանի որ համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

բ) «Գազկոմշին» ՍՊԸ-ի, «Վահրադյան Շին» ՍՊԸ-ի, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի, «Բերմա» ՓԲԸ-ի և «ՄՈՆՏԱԺՏՐԱՆՍՍՇԻՆ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել «Անբավարար», քանի որ չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին:

գ) ներկայացված գնային առաջարկների հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել.

- «Մոստովիկ» ՍՊԸ-ին՝ 1-ին չափաբաժնի մասով,

դ) առաջարկել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,

ե) փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ին, ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 28, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների 4-րդ հարկ, N 419 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Գասպարյան

Անդամներ՝ _____ Օ.Խաչատրյան

_____ Ա. Պապյան

Քարտուղար՝ _____ Ա.Մկրտչյան